

ցի: 1883ին Տէր Արիստակէսի հովուութեան օրով երբ Հայոց այրած եկեղեցին կը վերաշինուի, Պուլկարաց մետրապոլիտին արգելքներուն պատճառաւ հայք չեն կրնար աւելի մեծ եկեղեցի մը շինել և կը գոհանան փայտաշէնով:

Յ. ՔՐԻՍՏԵԱՆ



### ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԳԻՒՏԻՆ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ

Մեզի համար դժուարին է հինգ դար վերջ պայծառ գաղափար մը կազմել տպագրութեան գիտին կատարած ազդեցութեան նկատմամբ՝ դարուն ընկերութեան վրայ: Պարզ է որ թէ՛ այդ գիտը և թէ՛ գիտը հնարողը խանդավառութեամբ դրուատուեցան և փառաբանուեցան. այս խանդավառութիւնը այն աստիճանի հասաւ որ մինչև իսկ տպագրութիւնը «աստուածային արուեստ» անուանեցին: Պատմութիւնը մեզի փոխանցած է ժողովրդեան յայտնած այս սքանչացումին և ուրախութեան նկատմամբ բազմաթիւ վաւերաթուղթեր. սքանչացում՝ որու մասնակցեցաւ ոչ միայն ուսմիկ ժողովուրդը, այլ նաև իշխանագուններ, բարձր եկեղեցականներ, զրազէտներ և արուեստագէտներ. և այս տեղի ունեցաւ առանց բացառութեան բոլոր ազգերուն մէջ:

Սակայն պէտք է մտածել թէ սոյն խանդավառութիւնը բացարձակ էր ու գիւտը չունէր իր հակառակորդներն ալ, որ ընդդիմանային անոր. ընդ հակառակն: Տպագրութեան վրայ հրաշացողներու և այդ գիւտը ծաւալողներու խումբին ընդդէմ կազմուեցաւ թշնամի խումբ մըն ալ, աւելի սակաւաթիւ, բայց նոյնքան նախանձայոյզ կռուելու և նոյնքան բուռն: Այդ նախանձորդ խումբը մեծ մասամբ կը բաղկանար օրինակողներէ, որոնց ձեռքէն տպագրութիւնը կը գողնար արուեստին. այդ խումբին միացած էին եկեղեցականներէն ոմանք ալ, որոնք կը կարծէին թէ սրբապղծութիւն կը գործուի Աստուծոյ

խօսքն և պատուէրները պարունակող սուրբ գրքերը ամէնուն ձեռքը տարածելով, ինչ որ պիտի կատարէր տպագրութիւնը: Գիտնականներէն շատեր ալ յարեցան այդ խումբին. ասոնք սարսուռ կը զգային մտածելով որ դրամի փոքրիկ գումարի մը փոխան գիտութեանց նշխարները կրնային հասարակ ժողովրդկան ձեռքն իյնալ և պղծուիլ. տպագրութիւնը կը վերցնէր մէջտեղէն գիտունի և ուսմկի զանազանութիւնը, և այս կը քսամեկեկը վերենք: Որով գայրացան այդ գիւտին, և զրպարտութիւններ ու ամէն տեսակ խոչընդոտ և արգելք յարուցին:

Հակառակորդներու զխաւոր զրպարտութիւնն էր տպագրիչները ներկայացնել իրր կախարդութեան հետևողներ: Ֆ. Լիւգեն կը պատմէ իր Գպրոց Արդի Տպագրութեան զրքին մէջ թէ երբ Ֆուսդ Մայանսէն մէկ քանի ընկերներու հետ Բարիզ գնաց իր տպագրած մատենաներէն օրինակներ ներկայացնելու, ամբաստանուեցաւ իր ընկերներուն հետ երեսփոխանաց ժողովին առջև իրր գիւտագր և կախարդ: Եթէ կրցաւ ազատիլ անոնց ձեռքէն, զայս կը պարտի Լուդովիկոս ԺԱԻ, որ ոչնչացուց խօսարանի վճիռը: Նման դէպքեր գրեթէ ամենուրեք պատահեցան: Եղան նոյն իսկ զրազէտ և զիտնական անձեր որ մերժեցին ընդունիլ իրենց մատենադարաններուն մէջ շարժուն գրքերով տրպուած գրքերը:

Ասիկա կը ցուցնէ միանգամայն թէ առաջին տպագրիչները՝ քիչերը միայն բացառութիւն կը կազմեն, պէտք ունեցան զօրաւոր պաշտպանութիւններու իրենց նոր արուեստը զանազան երկիրներու մէջ գործադրելու համար. և զրամական նւպաստներու ալ կարօտացան տպագրութիւնը տարածելու համար:

Հակառակ այդ կատաղի և խուլ պայքարին, զարմանալի արագութեամբ տպագրութիւնը բոլոր աշխարհ ծաւալեցաւ. այնպէս որ նախ քան 1500ի վերջնաւն, նոր արուեստը ճանչցուած էր և կը կիրարկուէր Եւրոպայի տասնրկնց ազգերու մէջ: